

գին, ներողութիւն ընէք ինձ, ուրիշ անգամ
կը փորձեմ... հիմա ստիպողական գործ
ունիմ. . . Շօշկով պանդոկը պիտի գնամ՝
որ բարեկամի մը խօսք եմ տուեր և ան-
շուշտ հիմա ինձ կը սպասէ . . . ուստի խորն-
գրեմ, ներէք . . . (Ոսք կ'ելլէ) :

Գարեգին . — Շատ լաւ, բարեկամ .
ուրեմն վաղը ձեզի կը սպասեմ այստեղ՝
մեր այս ազնիւ բարեկամներու հետ . . . Յա-
րօ, ընկերէ պարոնին մինչև իւր բնակարա-
նը . . . իսկ մենք, բարեկամք, սկսինք մեր
խաղը . . . արդէն սկսելու համար գիտէք մեր
աւանդական թիւն է տասը մանէթ . . . զը-
նենք . . .

Խաղակիցք . — Դենք . . . (Էր սկը-
սի՞ւ խաղալ) :

Տիրան . — Երօ, հոգիդ սիրես, նախ

պօրիւ մը բեր մեզի . . . ծառաւ ենք . . .
(Երօ կը գնայ գիւնի բերելու և կը դառնայ
շոյա) :

Արտ . — Զարմանք որ Սեպուհը շեկաւ .
Գարեգին, — Է՛նչպարկենք նորա քա-
մակէն որ գայ . . . Երօ, պառնալու ժամա-
նակդ Սեպուհին իմաց տուր՝ որ իրեն կը
սպասենք . . . իմացար . . .

Յարօ . — Շատ լաւ, շատ բարի . . .
իմացայ :


Հրանդ . — (Դրժուկ . — Ի զճիւղ է
յուսալ . . . իւր եղբայրը բանտի մէջ . . . իսկ
ինքն հազիւ բանտէն ազատուած, և դար-
ձեալ խաղի՞ նստիլ . . . մէկ բան միայն կը
մնայ . . . այն ալ փորձեմ, և յետոյ . . .) : —
(Է՛նչէ, և վարագոյրը կ'իջնայ) :

(Շարայարելի)



ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆ ՅԻՏԱԼԻԱ

Պ Ե Ն Ե Յ Յ Ե



(Տես յէջ 514)

Ծովու վրայ երեկոյեան եւ գիշերուան տեսարանք — Հրապարակք եւ փողոցք . — Սրճարանք :

Պէտք 'ի Հասարակաց պարտէզն ուղղուե-
ցայ . այսպիսի տեսարանէ մը վերջ՝ կարելի
է բնական իրեր միայն տեսնել : Սա հողա-
տափ մ'է քաղաքին ծայրը, Լիդոյի գիմաց .
կանաչագեղ թփիկներն ցանկեր կը յօրինեն .
դեղին և կարմիր ծաղիկներ կը բազումն ար-
դէն ծաղկոցաց մէջ . օդորի սօսիներ, խորտ-
ուբորտ կաղնիք՝ որոց բողբոջազարդ զլուխ-
ներն կը ցոլանան փայլիլուն ծովուն մէջ :
Արեւելեան կողմն կայ դարաշատի մը՝ ուսկից կը
տեսնուին հորիզոնն և հեռաւոր կողիք : Այն
տեղ նորա ոտից ստորստը կը տեսնուի ծովն,
որ կը թաւալի իւր երկայնաձեւ նուրբ ալիք-
ներով կարմրորակ աւազի մը վրայ . փափուկ
մետաքսեայ և երփնազարդ պոյներ, երակաւոր

վարդեր, վերոնացուց շրջագգեստից նման
տփոյն մանիշակներ, Տիախառտի զառքաշից
նման թանձր, գինեզոյն ծիրանեփայլ ոսկեայ
դեղին երանգներ, սեւարակ կապոյտի մէջ
թաթախուած նսեմազոյն կանաչներ, և ար-
ծաթեայ խայտախարիւ կամ կայծերով զար-
դարուած լրթմազոյն կը ծածանին, կը միա-
նան և կը խառնուին կրակի անթիւ պար-
ներու ձեւով որոնք բարձրէն կու գան կ'ընկ-
նին անոնց վրայ իւրաքանչիւր ծառայման
արեւու ճառագայթից : Գողտր կապուտագեղ
ընդարձակ երկինք մը կը պարզէ իւր գմբէթը,
որոյ ծայրը կը հանգչի Լիդոյի վրայ, և ե-
րեք չորս անշարժ ամուկեր սաստափէ ծայրերու
կը նմանին :

Դեռ անելի հնուռ գնացի, և օրս ծովու վրայ անցուցի: Վերջապէս հոփն ելաւ և գիւշերն վրայ հասաւ: Տմոյն պոյններն, զեղնորակ գորշն և մանիշակապոյն կանաչն իջան ջրոյն վրայ, որ կը ծփծփայր անընդհատ և աղօտափայլ, և իւր միմջած ծփանքն անհանգստութեան խոր զգացում մը կ'ազդէր: Հոփն սաստիկ յուզման մէջ է, կ'ողբայ և յերկինս մեծամեծ ամպեր կ'ողորէ, արեւմուտքը կարմրցնող հրդեհի մնացորդն ալ աներեւութացած է: Մերթ ընդ մերթ լուսինն ամպոց պատառուածքներու միջէն կ'երեւի և կը ծածկուի, հոս յառաջ կ'երթայ ծանծաղ տեղէ մը անցնելով ճեղքուածքէ ճեղքուած, զրեթէ այն ինչ լուսաւորութեամբ՝ կը մարի, վայրկի մը միայն սփռելով իւր լոյսը տառաշնալ կոհակաց վրայ: Սակայն կը բացուի երկնային զմէթիին բոլորակութիւնը և մեծութիւնը. երկիրն հորիզոնի վրայ կ'երեւի իբր բարակ ածխային գօտի մը. ծոփն երեւումն, մշուշն անորոշ, և վերը կը գրաւեն շարժուն ամպերու անթափանց մարմիններն:

Այսպիսի գիշերուան մը մէջ ջրոյն գոյնն անբացատրելի է. թխաթոյր և մութ յասպիսի գունով, մերթ գունատ, բայց տնթիւ փրսփոցներով շառաչուն, կը լսուի իւր ձայնը առանց զրեթէ տեսնելու զայն, երբեք պատկերներու այն ընդարձակ անապատին մէջ առանց իր մը որոշելու: Տակաւ տակաւ աչք կը վարմին և կը զգան անեղծ լոյսը որ միշտ կը ցոլայ ծովէն: Իրբեւ հայելի մը ծածուկ և փակուած տնիեկի մը մէջ, իրբեւ անծանօթ խորերուն մէջ գտուած մոզական հայելիներէն մին՝ զոր կը նկարագրեն առասպելայօղ զբոյցք, հոս կը փայլի ազօտ, խորհրդաւոր կերպով, սակայն միշտ կը փայլի. մերթ փոքրիկ կոհակի մը ծայրն է որ պուրս կ'ելնէ, մերթ լայն ծփադի մը կոհակն է, մերթ հանդարտ յասակի մը շինմ մակերեւոյթն է, մերթ դարձեալ պտոյսի մը շարժումն որ յառաջ կը բերէ պայծառութիւն մը, հեռաւոր ցուլացում մը, սպիտակ յանկարծական ջրոյ ցլայտում մը: Բոլոր այս ազօտ լոյսերն զիրար խաչաձեւ կը կարեն, կը ծածկուին, կը խառնուին, և ահա միմութեան միջէն դուրս կ'ելնէ անորոշ պայծառութիւն մը իբր օտու-

րի մէջ տեսնուած մետաղէ մը, ափայլ լուսոյ առատութիւն մը, անշիջանելի փայլում, նութիւն մը կենդանի ջրոյ, զոր զուր տեղ կը նոսմացնէ մեռեալ երկինքն:

Իբրեւ կամ երեք ունգամ լուսինն երեւցաւ, որոյ երկայն զոգզոյնն զիծն կը նմանէր յուղարիւսորութեան մը լապտերի գծին՝ որ կը վառուի վար կախուած լաթերու մէջ և շքեղ մետելարեմի մը սեւ ծածկոցին առջեւ: Հորիզոնի վրայ, իբրեւ թափօր ջահերու և անաւհման միջոցի մը մէջ կեցած շէրիմներ, կ'երեւէր վենետիկի իւր լոյսերով և շէնքերով. ասա և անոյ ամփոփուած կը տեսնուի լոյսերու խումբ մը, ինչպէս մոսկու խումբ մը դազադի մը անկեան մէջ:

Հաւակն կը մօտենայ. ձախակողմն՝ անսովոր լուսութեան մը մէջ կ'ընկզմի Ռոփանոյ ջրանցքն անշարժ և ամայի. սեւ և փայլաւոր ջրոյ այս հանգստութիւնն կը թափառնէ համոյից և արարատի ջրերուն մէջ: Միտքն յակամայս կ'ընկզմի այս ցուրտ խառնութեանց մէջ. Ռօքան անսովոր է այս մունջ և գիշերային ջրոյն կեանքն: — Ոտհայն նոյն պահուն եկեղեցիք և պալատք կ'ընդարձակին և կը լուզան ծովու վրայ ուրուականի կերպարանօք: Սուրբ Մարկոս կ'երեւի, և իւր ճարտարապետութիւնքն իրենց սրածայր զանգակաւորներով և բազմապատիկ զմէթիներով կը գծեն միմութիւնը: Եպիտաղի մը ցնորից նման, իբր օպային զարդանկար երեւակայական պալատի մը՝ երկու կարգ լոյսերու մէջ կը տեսնուի հրապարակն իւր օհններով և իւր զանգակատնով: — Յետոյ նաակն յառաջ կ'երթայ կասկածելի ջրափողոցներու միջէն, ուր իրարմէ հեռու մեծ լապտեր մը կը սառեւրագրէ ջրոյ վրայ իւր ծփծփուն ցցունքը. ո՛չ մի գէմք և ո՛չ մի շտառ, բաց ՚ի նաւաւորի ձայնէն՝ ոնկեանց պաճուածներու մէջ. ամեն վայրկեան գոն զոլայն կամընի մը միմութեան մէջ կը մանէ, յետոյ դանդաղօրէն երկնցող որդի մը նման կը սողայ պալատի մը քարերու շարքին երկայնութեամբ, նկուղի մը միմութեան շափ թանձր ստուերի մը մէջ կորուսելով: Իսկոյն դուրս կ'ելնէ, և առանձին լապտեր մը կ'երեւի՝ օր արևուր կերպով կ'երերայ. գիշե-

լուան մէջ և կոհակի մը կապուտակ փռ-
րին վրայ կը ծաւալէ ցոլացումներ և վայր-
կենական փայլունութիւն մը: Մերթ ընդ
մերթ ալիւն կը զարնուի քակուած սանդու-
խի մը մաշած հիմերու: Կ'երեւի մանգա-
կափակ պատուհան մը, բորբոսած պատ մը.
չորս բոլորը խառնակութիւն մը գերար խաշա-
ձեւ կարող ջրանցներու, օձապտոյտ ջրոց՝ ու-
րոնք կ'երթան կ'ընկզմին անծանօթ կեր-
պարանայ մէջ:

Ամեն ինչ գեղեցիկ է. կ'ենթադրեմ որ
բնաւորութեան համակրութիւններ կան, յո-
րոց մին կը գտնեմ ես այս տեղ. սուէր
ինձ դեռի մը եղբրքը մեծ անտառ մը և
կամ վեհեակեր:

Ամենայն ինչ հաճոյք կ'ազդեն, մինչեւ
փողոցներն անգամ և փողրիկ հրապարակ-
ներն: Իմ բնակած լորեդանի պալատէն դէպ
ի Սուրբ Մարկոս երթալու համար՝ պէտք է
անցնիլ անկանոն և սիրուն փողոցներէն, ու-
րոնք զարպարուած են կրպակներով, փերե-
զակի ապրանքներով, ի ցոյց դրուած սեխե-
րով, կանաչեղէններով և նարինջներով, բազ-
մախաւն դիտողաց տարազներով, խորամանկ
կամ զգայաւոր կերպարանքներով, շառաշուն
և յեղեղուկ ամբողջի մը: Այս փողոցներն
այնքան նեղ են, և իրենց անկանոն պատե-
րուն մէջ այնպէս տարօրինակ կերպով նեղ
ընկած են, որ մարդ իւր գլխոյն վրայ միայն
կը տեսնէ երկնքի ժանեկաձեւ նեղ ու եր-
կայն նարօտ մը: Կը հասնիս հրապարակի
մը, ամայի բացավայր մը, բոլորովին ճերմակ-
ցած լուսեղէն սպիտակ երկնքի մը ներքեւ:
Սալաքարինք, որմը, շրջափակք, յատակք,
բոլորն ալ քարէ են. չորս կողմը կը տեսնուին
գոց տներ, որոց շարքերն կը ձեւացնեն եռան-
կիւն կամ քանդակազարդ քառանկիւն մը՝
երկնաշաղու և շինութեան ստիպիչ հարկէն.
կեդրոնը կը տեսնուի նրբարուեստ ջրամար
մը, որոյ եղբրքի քարին վրայ կը խաղան
քանդակածոյ առիւծներ և մերկ արձանիկ-
ներ: Անկեան մը մէջ կը տեսնուի աար-
օրինակ եկեղեցի մը, Սուրբ Մովսէս, — յի-
սուսեան ճարտարապետութեամբ ճակատ մը,
սուրբ Առաքեալք կամ սուրբ Դուկաս, — ար-
ձանազարդ մայրաճակատ մը, բուրբուրն սեւ-

ցած աղային օպոյ խոնաւութենէն և արեւու եր-
կարծամանակեայ կիզողութենէն. — կողմնակի
լուսոյ ցայտում մը երկու անկիւնաւոր մասերու
կը բաժնէ շէնքը, և կերպարանաց կէտն թռի-
թէ կը շարժի եռանկիւն ճակատներու վրայ,
կամ գուրս կ'ելնէ որմախորշերէն. մինչդեռ
միւսներն կը հանգչին ստուերի կապուտակ
թափանցիկութեան մէջ: — Դէպ 'ի յառաջ կ'եր-
թաս, և երկայն ու նեղ անցքի մը մէջ՝ զոր
փոքրիկ կամուրջ մը կը կտրէ, կը տեսնուին
գանգալք, որոնք արծաթեայ հետքեր կը թռ-
զուն ջրով գունաղեղեալ մարմարիտներն վրայ.
շարքին ամենէն ծայրն՝ ոսկեայ ճայլմիւն մը
կոհակին վրայ կը նշանակէ արեւուն լուսոյ
հոսումը, որով տանիքի մը բարձրութենէն ա-
լեաց վագրախայտ կողին վրայ կը պարեն
փայլմանդ:

Կամուրջն կարակնաձեւ ձգուած է ջրանց-
քին վրայ, և միջին դասակարգի օրիորդ մը
սեւաւ քօզի մէջ ծածկուած քիչ մը վեր կը
վերցնէ իւր շրջագետուր, ցուցնելու համար
իւր ճերմակ գուլպան, իւր ոտից նուրբ կոճը
և իւր առանց կըրնկի կոշիկը: Նա չունի
հռովմայեցի կանանց խորփտ և խիստ դէմքը.
կը քալէ ծածանելով իւր քօղին ներքեւ և
կը ցուցնէ իւր ձեռն պէս սպիտակ ծոծրակը,
իւր շիկորակ մագրերու հիւսից ներքեւ: Լայն,
ծիծաղաւտ և մեղկ, սիրամարգի կամ լաւ
եւա աղանոյ դէմք ունի, որ արեւու մէջ կը
փայլիլեցնէ իւր պարանոցը:

Կը մոլորիս, լաւ եւս, առանց առաջնոր-
դի ես, և հուսկ կը դանեւ ճանապարհը, բոս
արեւու և ստուերաց խոնարհելուն: Ամեն եւ-
կեղեցեաց քով, ամեն տեղեաց մէջ՝ ուր
գտնուի ցամաքի կը մօտեհան՝ կը գտնուին
ճարտար վարպետորիք, սուրբ նէպոլեոսի
մուրացկանք, որոց միակ գործն է բռնել նա-
ւակը տանգիւսին քով, նոյնպէս իմացնել զոն-
գուլավարին՝ երբ այցելուն կը վերապաւնայ,
արեւու տակ պարապորդ պտըտիլ, քնաւալ
կամ մուրալ: Չեւր կը կարկառեն, և կը
տեսնուին նոցա փոշաւ, մուլ և մարմարա-
կերպ քուրջերն, որոց միջէն կ'երեւի իրենց
կարմրորակ մարմինն. նոքա խանդարուած և
անորոշ գեղեցիկ գոյն մ'ունին, և շատ կը
յարմարին քանդակեալ որմանկեանց կամ հե-

առէն դատարկ քարափանց վրայ: — Կը հասնիս Սուրբ Մարկոսի հրապարակն. արեւն մտեր է, բայց Սուրբ Գէորգ, զանգակառւոնք, աղիւսեայ շէնքերն այնպէս վարդապոյնք են ինչպէս դեղձեւույ ծաղիկ մը, և արեւմտեան կողմէն ծիրանեզոյն զորոյն մը, տեսակ մը լուսեղէն փայլի, հնոցի շնչում մի կ'այրէ հորիզոնը: Յարեւելս, ամեն բոլորակութիւնք, ամեն սրածայր զանգակառւոնք փայլփուն ծռվէն զուրս կ'եշինեն, նման ակասէ կամ պորփիրի բամակներու և բազմաստեղն ճրագաբանաց. այս անկիւնասայրք և կատարք, նորօրինակ յառակութեամբ մը կը կտրին երկնային մեծ կոնքը, և երկնքի բոլորովին վարը հանգչած կը տեսնուի հեւաւոր զմրուխտի պոյն մը:

Հոգաբարձուաց կամարակապերու ներքեւ կը սկսին վառուիլ լոյսերու փունջեր. կը նստիս ի սրճարանի փլորեան՝ փորրիկ սենեկաց մէջ, որոնք զրուսզուած են մեծ հայելիներով և այլբանական ծիծաղկոտ կերպարանքներով. կիսափակ աշքերդ ներքուստ կը հետեւին օրուան պատկերներուն, որոնք իբրեւ երապ մը կը կարգաւորուին և կը փոփոխուին. բերնիկ

մէջ կը թողուս որ հային անուշահոտ օշաբակներն, յետոյ զանոնք կը տաքցնես համեղ սրճով մը, որուն նման Եւրոպայոյ մէջ ուրիշ տեղ չի գտուիր. արեւելեան ծխախոտ կը քաշես, և կը տեսնես ասջեւղ մետաքսեայ շրջագծեօտով՝ շնորհաւուք, պնճապարզ ծաղկափառ ծառ կանայք՝ որոնք լուս ու մուշկ կը զնեն սեղանին վրայ նարգէս կամ մանիշակներ: Այն միջոցին հրապարակն լեցուած է բազմութեամբ. ոեաւ ամբօք մը կը ողագայ և կը շարժի լոյսերով զծուած ստուերին մէջ. շրջուն երամիշտք կ'երգեն կամ նուագահանդէս մը կը ձեւացնեն ջութակներով և տասնիզներով: — Վեր կ'եշինես, և անաշաւ ծուն ստուերներով լեցուած հրապարակին ետեւը, լուսաւոր և զուարթ կրպակներու կրկին ծոպի մը ծայրը, կը տեսնուի Սուրբ Մարկոս. իւր արեւելեան անսովոր բուսականութիւնն, իւր կոճէզներն, իւր փուշերն, իւր արձաններու ցանցակերպ գործուածքն, իւր գաւթիներու սեւա խողոններն, որոնք կը կտրուին երկու կամ երեք լապտերներու զոգզովմանց ներքեւ:

Շաքայարեկի

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՅ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

1870Ի ՊԱՏԿԵՐԱԶՄԻՆ ՊԱՏՃԱՌՈՅԵՐԸ 2

Քուս և հինգ տարի է յորմէ հետէ Գաղղիայ պատերազմ՝ հրաշարակեց Պրուսիոյ դէմ, և սկսաւ այն ահաւոր կռիւր՝ որ պատճառ եղաւ Գերմանական միութեան. այժմ՝ անխարկ մը տանք անցելուն, և քննենք թէ ինչ էին այս նշանաւոր պատերազմին պատճառները և Գաղղ.

1. Թէպէտ և շատ անգամ՝ և զանազան կերպով գրուած է փռանկ-Պրուսիական պատերազմին պատճառաց մասին, սակայն անօգուտ չենք համարի անգամ մը ևս խօսիլ անոր վրայ. — մանաւանդ անոր քսան և հինգերորդ ասորիւարձին առթիւ, — այս օրբուածովս, որուն աղբիւրներն են ոչ միայն գերմանացի, այլ և զգոյցիացի, իսպաղեի և անգղիացի նմաւ հեղինակք և զործոյս տեղեակ անձինք: Հետազոտութեան է մասնաւորապէս՝ Նիքիտովիչի իշխանին՝ Սպանիոյ թագին թիկնաւորութեան մասը:

դիոյ ընդհանրութիւնը, մանաւանդ ուսեայ մասը, չէր կրնար հանգուածել որ Պրուսիա փառաւոր յաղթութիւններ ընէ ընդդէմ Վեստրիոյ. և մեծաքայլ յառաջադիմէ դէպ ի Գերմանական միութիւն՝ առանց փոքր երկիր մը զիջանելու կամ հպատակութեան ցոյց մ'ընելու Գաղղիոյ, վասն զի ուռանց այս վերջնոյս հրամանին՝ գրեթէ կարելի չէր Եւրոպայոյ մէջ և ոչ իսկ թնդանօթի հարուած մի արձակել: Գեներալրացի պատեւրազով բարոյական պարտութիւն մը համարուեցաւ նոյն իսկ Գաղղիոյ հասարակութեան. և Սպաղմայի փրէժնգրութիւնն եղաւ նշանաբան մը բոլանդակ Գաղղիոյ:

Վրէժխնդրութեան ոգին նոր արթնցած չէր Գաղղիացոց մէջ. վասն զի զայն յայտնի ցուցեր էին նաև Վաղեւոյի պատերազմէն վերջնակայն այն անգամ վարչութիւնը կրցաւ խո-